ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԶԵՆՔ ԵՎ ԶՐԱՀ

Մ.թ.ա. VI-IVդդ. հուշարձանների պեղումներով ձեռք բերված զենքերը թե՛ տեսակով, թե՛ քանակով ներկայացված են ավելի լավ և ամբողջական, քան զրահները; Հատկապես առատ են նիզակները, նետասլաքները, դաշույնները և այլն: Զենքերի մի մասը բնորոշ են նախորդ դարերի ուրարտական և տեղական մշակույթներին, իսկ մյուս մասը երևան է գալիս կամ լայն տարածում է գտնում քննարկվող ժամանակաշրջանում: Պայմանավորված նյութով, պատրաստման տեխնիկայով, ինչպես և հին ու նոր տեսակների զուգահեռ կիրառությամբ առավելապես աչքի են ընկնում նետասլաքները: Պեղումներով հայտնաբերվել են բրոնզե, երկաթե, ոսկրե նետասլաքներ:

ԲՐՈՆԶԵ ՆԵՏԱՍԼԱՔՆԵՐԻ առաջին խմբի մեջ առանձնանում են տափակ (կենտրոնում թեթև ուռուցիկ) սրածայր, կախված թևեր ունեցող սայրով և քառակող կամ տափակ պոչուկով նետասլաքները (Նորաշեն, Բերդաքար, Մեսսի քարերի բլուր) (աղ. 40, 1, 2): Մրանք պատրաստված են բրոնզե թերթը կտրելու, կռելու և թևերի եզրերը հեսանելու տեխնիկայով (երկ. 5,6 - 13,5սմ 101, էջ 46): Հայաստանում և Անդրկովկասում այս նետասլաքները երևան են գալիս մ.թ.ա. IX-VIII դարերից, օգտագործվելով տեղական ցեղերի և ուրարտացիների կողմից: Կովկասում ևս այս նետասլաքները հայտնի են արխայիկ համալիրներից: Ե.Ի.Կրուպնովը դրանց երևան գալը վերագրում է «կովկասյան տեղական մշակույթների զարգացման առաջին փուլին և Անդրկովկասի վաղ ուրարտական ժամանակաշրջանի մշակույթներին» (134, էջ 90): Իսկ Բ.Ա.Կուֆտինը և Բ.Բ.Պիոտրովսկին կովկասյան երկթև այս նետասլաքների ծագումը իրավացիորեն կապում են քարե նետասլաքների հետ (136, էջ 67): Դրանք գոյատևում են ուրարտական ժամանակաշրջանի ամբողջ ընթացքում և վերապրուկային ձևով պահպանվում են նաև մ.թ.ա. VI-IV դարերում: Կրուպնովը ևս մ.թ.ա. VI-Vդդ. թվագրվող Նեստերովյան թիվ 20 դամբարանի նյութերի մեջ հանդիպելով այս նետասլաքներին, դրանց գոյատևման սահմանը հասցրել է մինչև այդ դարերը:

Բրոնզից են պատրաստված *սկյութական կոչվող նետասլաքները*, որոնք պատրաստվում էին ձուլելու եղանակով: Մ.թ.ա. VI-Vդդ. հուշարձաններում հայտնաբերված այս նետասլաքները կազմում են մի քանի ենթախումբ: Ամենահինը երկթև նետասլաքներն են, որոնց խողովակաձև կոթառները ձգվում էին մինչև սլաքի գագաթը և կտրվածքում սլաքին տալիս շեղանկյան ձև: հանդիպում են երկու տարբերակով: *Առաջին տարբերակի* նետասլաքները բավական խոշոր են (երկ. 4,5-5սմ), թևերի և կոթի միացման տեղում ունեն ելուստ-փշիկ (Աստղի բլուր, Կարճաղբյուր, երեք օրինակ Նորաշենից) (աղ. 40, 3, 4): Նորաշենի այս նետասլաքներից մեկը մյուսներից տարբերվում է իր ավելի փոքր չափերով և թևերի տեղադրությամբ: Թևերը տեղադրված են կոթի վերին մասում, իսկ փշիկը ամրացված է կոթի ստորին ծայրին, թևերից բավականաչափ հեռու: *Մյուս տարբերակը* կազմում են Նորաշենից (երկու նմուշ), Արին բերդից, Արմավիրից գտնվածները, որոնք կրկնում են առաջինների գլխիկների ձևը, իսկ կոթերը երկարավուն են (սլաքի ընդ. երկ. 5,5սմ, կոթինը՝ 2սմ) և առանց փշիկի (աղ. 40, 5, 6): Երկթև նետասլաքների այս երկու տեսակներից հայտնաբերվել են Կարմիր բլուրից, Արգիշտիխինիլիից, Մուսիյերից (181, էջ 248: 178, էջ 86, նկ. 55: 156, էջ 173, նկ. 108): Լայնորեն հայտնի են նաև Առաջավոր Ասիայի, Միջագետքի, Իրանի, Անդրկովկասի, Միջին Ասիայի, Հարավռուսաստանյան տափաստանների հուշարձաններից և թվագրվում են մ.թ.ա. VII-VI դարերով (249, աղ. 42, 1, 2, 3, 4; 269, էջ 138, նկ. 196; 271, աղ. 76/20: 123, նկ. 18 r, e): Նորաշենի միաշերտ հուշարձանում դրանց առկայությունը մ.թ.ա. VI-IVդդ. նյութերի, հատկապես ընպանակների, սափորների և այլնի հետ, թույլ է տալիս եզրակացնելու, որ Հայաստանում (արխաիկ) նետասլաքներն օգտագործվել են նաև հետագա՝ V, գուցե և IV դարերում: Այս եզրակացության օգտին է նաև Կարճաղբյուրի անտիկ բնակա-

վայրի պեղումներով հայտնաբերված նետասլաքը (42, էջ 276):

Մի քանի տարբերակներով են հանդես գալիս սկյութական եռաթև նետասլաքները, որոնք գտնվել են վերը նկարագրված երկթև նետասլաքների հետ: Դրանցից հնագույնները ևս փշիկավոր են և գտնվել են միայն երկու օրինակ Նորաշենից: Առաջինը փոքր չափերի (երկ. 2,8 սմ) համեմատաբար երկար կոթով և եռաթև գլխով նետասլաք է: Թևերը գագաթից սկսվելով՝ իջնում են ցած, անկյուն կազմելով և բարակելով ծուլվում են կոթին: Այդ միացման կետից կախված է փշիկը: Նետասլաքն ունի ծուլման պրոցեսից առաջացած, արտահայտված կարեր, կոթի վրա անցք (աղ. 10, 8): Նետասլաքների կոթերի վրա այդ անցքերը տեղադրված են կոթերի վերին մասում, այսինքն մշտապես որոշակի տեղում, ունեն կանոնավոր կլոր կամ ձվաձև բացվածք, որի եզրերը հղկված են: Եռաթև այս նետասլաքներից երկրորդ օրինակի՝ բավական լայն թևերով սայրը նստած է խողավակաձև կոթառի գագաթին, որի եզրից կախված է բավական երկար և սուր փշիկը: Թևերը գագաթից սկսվելով, կեսից բուռ անկյուն կազմելով իջնում են դեպի կոթը (նետասլաքի երկ. 3,8սմ է: Աղ. 40, 7)): Նետասլաքի թևերը ծուլելուց հետո լրացուցիչ սրված են: Այս նետասլաքները, երկթևանիների հետ միասին հայտնաբերվում են աշխարհագրական լայն տարածքի վրա: Դրանց միասին հանդես գալը բացատրվում է միևնույն կաղապարով միաժամանակ ծուլելու հանգամանքով: Հայաստանում հայտնի են Կարմիր բլուրից, Թոփրախ կալեից, Հայկաբերդից, Մուսիերիից, Օշականից (178, էջ 86, նկ. 55; 181, էջ 237, նկ. 7, 9; 255, էջ 58: 111, էջ 275, աղ. III), հարևան երկրներից՝ Մինգեչաուր, Տարսուս, Կարքեմիշ, Ալիշար, Բաբելոն, Հերաթ և հարավռուսաստանյան սկյութասարմաթական հնավայրերից (124, աղ. IV 1.9: 285, էջ 125-126: 159, էջ 10, աղ. I): Այս նետասլաքների հայրենիքի հարցը դեռևս պարզված չէ: Կան տարբեր կարծիքներ: Ա.Ի.Մելյուկովան, որը մանրամասն քննարկել, դասակարգել է սկյութական նետասլաքները, դրանց նախատիպերը համարում է «Նոա» մշակույթի համալիրներում հայտնաբերված եռաթև ոսկրե նետասլաքները, որոնք թվագրվում են մ.թ.ա. XI-VIII դարերով (159, էջ 11): Ռ.Գիրշմանը դրանք կապում է Ալիլակ "B" դամբարանադաշտի նյութերի հետ (246, էջ 17-18), իսկ Վ.Մ.Մասոնը Ալիլակ "B"-ի ամենաուշ դամբարանների հետ (157, էջ 48): Սակայն Ռ.Մ.Բյոմերը վերանայելով դամբարանադաշտի նյութերը և թվագրման հարցը, ապացուցում է, որ այդ նետասլաքները դամբարաններից չեն, այլ պատահական են (233, էջ 821-822): Ստացվում է, որ այս նետասլաքների ամենավաղ նմուշներն ամենուրեք հանդես են գալիս մ.թ.ա. VII դարի վերջին և VI դարի սկզբներին, համարյա միաժամանակ և հարատևում են մինչև մ.թ.ա. IVդ., ինչպես վկայում են Շոշից, Ալիշարից գտնվածները: Նորաշենի նետասլաքները վկայում են նույն իրավիճակը նաև Հայաստանի համար:

Եռաթև նետասլաքների երկրորդ ենթախումբը, զուրկ է փշիկից և աչքի է ընկնում աղեղնաձև թևերով և դրանց արանքից դուրս ցցված բավական երկարավուն, խողովակաձև կոթով (աղ. 40, 10, 11): Հայտնաբերվել են թե՛ փշիկավոր արխաիկ նետասլաքների հետ, թե՛ առանձին՝ Արին բերդից, Ջուջևանից, Մակարաշենից, Հայկաբերդից, Մայմնջուղից: Թոփրախ կալե Ռուսախինիլիից, Կարմիր բլուրից, Մուսիերիից, Աստղաձորից գտնված նույնատիպ նետասլաքները ցույց են տալիս, որ այս ենթախումբը ևս սկիզբ է առնում մ.թ.ա. VII-VI դարերից (181, էջ 240, նկ. 80: 154, աղ. XXX, 20: 255, էջ 69, նկ. 26): Իսկ իր խեցեղենով մ.թ.ա. V-IVդդ. թվագրվող Ջուջևանի համալիրում այս նետասլաքի առկայությունը վկայում է, որ դրանք օգտագործվել են մինչև մ.թ.ա. IV դար: Այս եզրակացության օգտին է խոսում նաև այժմ Շոշի բնակավայրի նոր թվագրումը, որ առաջ է քաշել Ատրոնախը (276, էջ 242): Այստեղ այս նետասլաքներից հայտնաբերվել են մեծ թվով և թվագրվում են մ.թ.ա. V-IV դարերով:

Եռաթև նետասլաքների *երրորդ տեսակը* կազմում են Արին բերդի Աուսի տաճարի և նրա շրջապատից, Ղաչաղանից, Ջրառատից գտնվածները, որոնք ունեն սահուն, աղեղնաձև կամ շեղ կտրված թևեր, շատ կարճ կամ ներքին կոթառ (աղ. 40, 12, 14): Դրանք հանդես են գալիս մ.թ.ա. VI-V դարերում: Քննարկվող նետասլաքների թվագրման հարցին անդրադարձել են շատ ուսումնասիրողներ (181, էջ 247; 106, էջ 106: 16, էջ 106), ուստի մենք չենք ծանրանում այդ հարցի վրա, նշենք միայն, որ Շոշի աքեմենյան բնակավայրի, Արևելյան Եվրոպայի, Միջին Ասիայի հուշարձաններից հայտնաբերված նույնատիպ նետասլաքները ևս թվագրվում են այդ դարերով (247, աղ. XLIV G.S. 2045, 2646: 191, էջ 46, 145, էջ 96-97, աղ. 30_8):

Չորրորդ տեսակի նետասլաքներն ունեն բրգաձև գլխիկներ, որոնցից թևերն իջնում են ցած և սուր ծայրերով կախվում, երբեմն կոթառից էլ ցած: Նորաշենի օրինակը (երկ. 2,5 սմ) աչքի է ընկնում նեղ՝ մինչև կոթի կեսը հասնող

թևերով և սրանց արանքից դուրս ելնող կոթառով (աղ. 40, 15), Թմբադիրինն՝ ավելի փոքր չափերով, սակայն լայն թևերով (աղ. 40, 13): Արին բերդի և Ակների նետասլաքները կրկնում են վերինների ձևերը (աղ. 40, 17), իսկ Ակների մյուս նետասլաքի թևերն այնքան երկար են կախված, որ բավական աչքի ընկնող կոթառը մնում է դրանցից կարճ (նետասլաքի երկ. 4,5, պոչի երկ. 0,3 սմ (աղ. 40, 16)): Նետասլաքների այս տեսակը թե՛ իրենց համալիրներով, թե՛ զուգահեռ նյութերով թվագրվում է մ.թ.ա. V-IV դարերով: Մեծ քանակությամբ հայտնաբերվել են սկյութաուարմաթական հուշարձաններից, Հյուսիսային Կովկասից, Մինգեչաուրից, Վանից, Ռուսթավից, Պերսեպոլսից և բոլորն էլ թվագրվում են այդ դարերով:

ԵՐԿԱԹԵ ՆԵՏԱՍԼԱՔՆԵՐ: Երկաթե նետասլաքների *առաջին տեսակը* (Նորաշեն, Արմավիր) փոքր տարբերություններով կրկնում է նմանատիպ բրոնզե նետասլաքների առաջին տեսակի ձևերը և սերում դրանցից (աղ. 41, 1): Պետք է նշել, որ հենց այդ տարբերությունների հիման վրա է, որ Արմավիրի նետասլաքը, որը բլրի մակերեսից է հայտնաբերված և չունի շերտագրական տվյալներ, վերագրում ենք վաղ հայկական մշակույթին, քանի որ ուրարտականները բոլորը պատրաստված են բրոնզից, ունեն ձևերի կլոր անցումներ և կարճ ծայրերով թևեր: Թեև Կուֆտինը երկաթե երկթև այս նետասլաքների հանդես գալը վերագրում է մ.թ.ա. VII դարին, նկատի ունենալով Նուլի գյուղի դամբարանում, բրոնզե և ոսկրե նետասլաքների միջավայրում գտնված երկաթի նետասլաքը (136, էջ 48-49, աղ. XXV), սակայն դրանք առատորեն հայտնաբերվում են և բնորոշ են ավելի ուշ համալիրներին (Կովկաս, Անատոլիա, Միջագետք, Միջին Ասիա (134, էջ 230, նկ. $48_{7,8}$: 274, էջ 177, աղ. XXX 1, 6; 145, էջ 103, նկ. 36_1)): Հայաստանում և Կովկասում այս տիպը տեղական արտադրության արգասիք է, ունի կայուն ձև, որը բրոնզից անցնում է երկաթին և գրականության մեջ իրավացիորեն հայտնված է այն կարծիքը, որ հարևան երկրներում տարածվել են Կովկասից (145, էջ 104):

Երկաթե նետասլաքների *երկրորդ տեսակի* ձևը ևս վաղ հայկական մետաղագործությունը ժառանգել է նախորդ դարերից: Դրանք *տերևաձև ուրվագծով նետասլաքներ են*, որոնք ունեն ներքին տարբերություններ: Շատ են հանդիպում կտրվածքում ձվաձև, լայն տերևաձև գլխիկով և տարբեր երկարության կլոր պոչով (երկ.՝ 4-9սմ, գլխիկը՝ 3-6սմ) տարբերակները (Արին բերդ, Աստղի բլուր, Աթարբեկյան (աղ. 41, 2)): Աթարբեկյանի և Աստղի բլուրի մի քանի նմուշներ գլխիկի և պոչուկի միացման տեղում ունեն ուռուցիկ հաստացում՝ խնձորակ: Հանդիպում են տերևաձև, երբեմն կտրվածքում շեղանկյուն գծագիր ունեցող գլխիկով օրինակներ (Արին բերդ, Նորաշեն), որոնք նեղավուն են, ձգված: Սրանք ևս գլխիկի և պոչուկի միջև ունեն հաստացում (երկ. 5-6սմ, պոչի երկ. 0,6-1,0սմ): Առանձին տարատեսակ է Նորաշենի մի նետասլաքը, որն ունի փոքր, սալորի տերև հիշեցնող, կտրուկ սրվող գլխիկ և բարակ կլոր պոչ (երկ. 6սմ, աղ. 41, 3):

Երկաթե նետասլաքները պատրաստված են կռման, կոփման միջոցով և ակնհայտ է պատրաստող վարպետի անհատական վերաբերմունքը, մոտեցումը: Տերևաձև երկաթե նետասլաքները ինչպես Հայկական լեռնաշխարհում, այնպես էլ Առաջավոր Ասիայում, Իրանում հանդես են գալիս մ.թ.ա. VIII-VI դարերում: Հայտնաբերվել են Կարմիր բլուրից, Արգիշտիխինիլիից, Բուսաբանական այգում բացված դամբարանից, Կայալի-դերեից (178, էջ 41, նկ. 22: 155, նկ. 6; 6, աղ. 275: 235, նկ. $22_{8,9,10}$), որոնք հիմնականում թվագրվում են մ.թ.ա. VI-IV դարերով: Ասկայն, ինչպես տեսանք, տարբեր ձևափոխումներով դրանք շարունակում են գոյատևել հետագա դարերում: Նույն պատկերն է Իրանում, լավ ներկայացված Թեփե-Սիալկի և Պերսեպոլսի նմուշներով (246, աղ. LVII, LXX; 271, աղ. 74_{4-6}): Միդասի քաղաքի և Բողազքյոյի մ.թ.ա. V-III դարերով թվագրվող այս նետասլաքներն ունեն որոշ առանձնահատկություններ, ինչպես Հայաստանի նետասլաքները: Միդասի քաղաքի նետասլաքների գլխիկները նեղանում են մինչև պոչուկի հետ միանալը, իսկ Բողազքյոյինները ունեն խողովակաձև կոթառ (249, աղ. 42_{7-10}):

Վերը քննարկված նետասլաքները, որոնք հիմնականում մ.թ.ա. VI-IVդդ. մշակույթը ժառանգել է նախորդ դարերից, գոյատևում են մինչև մ.թ.ա. IIIդ.: Հելենիստական դարաշրջանում դրանք փոփոխություններ են կրում (ձեռք են բերում միջնաջիղ և այլ գծեր), ինչպես երևում են Արմավիրի և Արտաշատի սլաքներից (206, էջ 226, աղ. IV , 4; 5, 6, V, 7):

Քառանիստ նետասլաքները երկաթե նետասլաքների *երրորդ տեսակն են*, որոնց մեջ առանձնանում է Արին բերդի պեղումներով հայտնաբերված նմուշը: Դրա քառակող գլխիկը սահուն անցում է կատարում կլոր. խողովակաձև կոթին (երկ. 5սմ, կոթի երկ. 2 սմ (աղ. 41, 4)): Այն մի հազվագյուտ նմուշ է, որի համար դժվար է զուգահեռներ գտնել նույնիսկ սկյու-

թա-սարմաթական նետասլաքների հսկայական բազմազանության մեջ, որում քառակող խողովակոթառ նետասլաքները պատրաստված են բրոնզից և բացարձակապես ներքին կոթառով են (191, նկ. 39; 159, էջ 22): Քառանիստ, սակայն ներքին կոթառով բրոնզե նետասլաք գտնվել է նաև Պերսեպոլսից (271, աղ. 76_{18}): Այս աղերսները թվագրվում են մ.թ.ա. V-IV դարերով: Քանի որ ամենավաղ քառանիստ նետասլաքները հայտնի են այդ դարերից, նետասլաքի նյութից և այն հանգամանքից, որ ուրարտական զինագործությանը նետասլաքների այս տեսակը հայտնի չէ, քննարկվող սլաքը, չնայած ձևի յուրահատկությանը, կարելի է թվագրել մ.թ.ա. V-IV դարերով: Քառանիստ նետասլաքների հիմնական խումբը պոչուկավոր է: Քննարկվող հուշարձաններից հայտնաբերվել է միայն մեկ օրինակ՝ Աստղի բլուրից: Այն քառակող գլխիկի և կլոր պոչուկի ընդգծված միացումով նետասլաք է (աղ. 41, 5): Այս տեսակը շատ տարածված է Փոքր Ասիայի հուշարձաններում, հատկապես Բողազքյոյում, «Միդասի» քաղաքում և թվագրվում է մ.թ.ա. V-III դարերով (206, էջ 226: 249, աղ. 42, C $_{3-6}$): Սակայն դրանք լայն կիրառություն են գտնում հատկապես հետագա դարերում: Հայաստանը նույնպես բացառություն չի կազմում այդ տեսակետից: Հելենիստական հուշարձաններում այս նետասլաքները դառնում են մասսայական, ի հայտ բերելով զարգացման ժամանակագրական շարունակական կապ:

Եռաթև գլխիկով և կլոր, երկարավուն պոչուկով նետասլաքները կազմում են *չորրորդ տեսակը*: Սրանք մ.թ.ա. III-Ադ. լայն տարածում գտան Առաջավոր Ասիայում, Իրանում, Միջին Ասիայում, Հյուսիսային Կովկասում և այլուր, վերջնականապես գործածությունից դուրս մղելով բրոնզե սկյութական նետասլաքները: Սակայն այս նետասլաքների ձևը մշակվել էր շատ ավելի վաղ, բրոնզե օրինակներով: Բրոնզե եռաթև պոչուկավոր նետասլաքներ Առաջավոր Ասիայում հայտնաբերել է Շմիդտը, Ալիշարի IV շերտում և թվագրել մ.թ.ա. 1400-1200թթ. դարերով (268, էջ 138): Ասարմաթական վաղ (մ.թ.ա. VIII-VIIդդ.) նետասլաքների մեջ ևս հանդիպում են պոչուկավոր եռաթև նետասլաքներ: Դժվար է ասել, թե այս առաջավորասիական, սիբիրյան կամ միջին ասիական որ նետասլաքներից են առաջացել եռաթև երկաթե նետասլաքները: Սակայն պարզ է, որ դրանք կրկնում են բրոնզե նմուշների ձևերը: Ամենավաղ երկաթե սլաքները վերագրվում են ուշ ասորեստանյան (206, էջ 229) և աքեմանյան ժամանակաշրջաններին (271, աղ. $76_{4,5}$): Հայաստանում ամենավաղ թվագրվող նետասլաքները գտնվել են Արին բերդում, Ակներում, Բերդաքարում: Արին բերդի սլաքները (աղ. 41, 4) գտնվել են վերը քննարկված սկյութական նետասլաքների հետ և դրանց ուշ թվագրումը անհնար է: Ակների մի նետասլաքի հետ այս նմուշները ներկայացնում են եռաթևների առաջին տարբերակը, որոնք ունեն երկարավուն (երկ. 4-6սմ, պոչի երկ. 3-2,5սմ) նեղ, դեպի վեր ու շեղ կտրված թևերով գլխիկ և կլոր պոչ:

Երկրորդ տարբերակը կազմում են Ակների և Բերդաքարի նետասլաքները, որոնք ունեն ավելի մեծ չափեր (6,5-5սմ) կամարաձև գագաթ, լայն ու ուղիղ կտրված թևեր (աղ. 41, 8): Ակների նետասլաքները գտնվել են խառը միջավայրում: Բայց շերտագրական տվյալների բացը լրացնում է նետասլաքի բնորոշ ձևը, որն ամբողջությամբ կրկնում է վերը նշված վաղ բրոնզե նմուշներին: Պետք է նշել, որ ուշ թվագրվող նետասլաքների մոտ առավելապես գերակշռում են սրածայր կախված թևերով օրինակները: Կարմիր բլուրի հելենիստական դամբարանների, Արմավիրի, Գառնիի, Արտաշատի առատորեն հանդիպող սլաքները խոսում են դրանց հետագայում լայն տարածում ստանալու մասին, իսկ Դվինի օրինակները վկայում են հարատևումը երկար դարերի ընթացքում:

ՈՍԿՐԵ ՆԵՏԱՍԼԱՔՆԵՐ: Վաղ հայկական հուշարձաններից հայտնաբերվել են նաև ոսկրե նետասլաքներ՝ երկուսը Նորաշենից, մեկական Թմբադիրից և Կարճաղբյուրից: Փոքրաթիվ այս նետասլաքները տարբեր տեսակի են: Թմբադիրի նետասլաքը (երկ. 8,5սմ, պոչի երկ. 4սմ) երկթևանի է և պոչուկավոր (աղ. 41, 9): Նեղ ձգված գլխիկը կտրվածքում ձվածիր է, սրածայր թևերը կախված են պոչուկի կողքերից: Գլխիկի և պոչուկի միացումը ընդգծված է, իսկ թևերը գլխիկից առանձնացված փոսիկներով: Պոչուկը կլոր է և շատ սուր: Կարճաղբյուրի նետասլաքը ևս երկթևանի է, գլխիկը՝ երկար (երկ. 7,5սմ) ու տափակ: Հաստ ու կլոր պոչին (պահպանված մասի երկ. 3սմ) միանում է եռանկյուն կտրվածքով (աղ. 41, 10): Այս երկու օրինակները ձևով կրկնում են նախորդ դարերում լայնորեն կիրառվող և վաղ հայկական ժամանակաշրջանում շարունակվող բրոնզյա երկթև նետասլաքների ձևը, միայն խիստ ձգված են ու սրածայր, ինչը բնորոշ է ընդհանրապես ոսկրե նետասլաքներին: Նորաշենի երկու նետասլաքները ևս մեծ չափերի են, սրածայր, եռանիստ: Մեկի նիստերն ավարտվում են պոչուկից փոսիկներով անջատվող, կախված սուր թևերով:

Պոչուկը գլխիկի շարունակությունն է կազմում և հաստավուն է: Նետասլաքը զարդարված է կենտրոնում խոր փորվածք ունեցող երկու օղակներով (աչք), զարդամոտիվ, որը լայնորեն կիրառվում է քարե և ոսկրե այլ առարկաների, նույնիսկ խեցեղենի զարդարման տեխնիկայում (աղ. 41, 11): Երկրորդ նետասլաքն ունի խիստ երկար (13սմ) եռանիստ գլխիկ, որը ավարտվում է ոչ մեծ եռանկյունաձև կտրվածքներով: Գլխիկը, երկաթե նետասլաքների նման, կլոր պոչուկին միանում է կլոր հաստացումով (աղ. 41, 12): Ոսկրե նետասլաքները պատրաստված են միակտոր ոսկորից, դանակով կտրելու, հղկելու, փայլեցնելու, փորագրելու տեխնիկայով: Ոսկրե նետասլաքները Հայաստանում օգտագործվել են հնագույն ժամանակներից: Մ.թ.ա. VI-IVդդ. համալիրներում դրանց առկայությունը պետք է համալրել վերապրուկային և, հավանաբար, ծիսական արարողությունների ժամանակ կիրառվող:

Նետասլաքների կոթեր վաղ հայկական հուշարձաններից չեն պահպանվել, սակայն որոշ խողովակակոթառ սլաքների վրա պահպանված մնացորդներից երևում է, որ դրանք փայտից են եղել: Եվ ինչպես վկայում է շատ երկրների սլաքների կոթերի քննությունը, դրանց համար կարող էին օգտագործվել հացենու, հոնի (135, VII 1, 2), կաղամախու կամ բարդենու փայտերը, ծառատեսակներ, որոնք առատ աճում էին Հայաստանի անտառներում: Հայաստանի տարբեր վայրերից գտնված բրոնզե գոտիների վրա նետասլաքների պատկերացումներից երևում են, որ սլաքների կոթերն ունեն փետրաձև ավարտ՝ նետասլաքի թռիչքին ուղղություն և արագություն հաղորդելու համար (255, էջ 165, նկ. 191, էջ 223, աղ. II): Սա հուշում է, որ ինչպես մյուս ժողովուրդների՝ պարսիկների, սկյութների, սարմատների, այնպես էլ հայերի նետասլաքները բաղկացուցիչ էին՝ մետաղե սլաք, փայտե կոթ՝ ագուցված եզրափակող եղեգնի մեջ:

ԱՂԵՂ: Աղեղների գոյության փաստը ինքնըստինքյան ենթադրում է նետասլաքների առկայությունը, սակայն մ.թ.ա. VI-IVդդ. հուշարձաններից ամբողջական աղեղ կամ մաս կազմող, նրա հետ անմիջապես կապվող առարկաներ առայժմ չեն հայտնաբերված: Այս բացը որոշ չափով լրացվում է նախորդ դարաշրջանի աղեղների գյուտերով (14 ա, էջ 16), կերպարվեստի նմուշների, կիրառական առարկաների վրա պահպանված պատկերներով: Աղեղի առաջին պատկերումները հանդիպում են մ.թ.ա. III հազարամյակով թվագրվող ժայռապատկերների վրա (49, աղ. III, նկ. 25): Ցայտուն պատկերներ կան հատկապես ուշ բրոնզեդարյան և վաղ երկաթի ժամանակաշրջանների հուշարձաններում՝ դարձյալ ժայռապատկերների, անոթների, գոտիների վրա, որոնք թվագրվում են մ.թ.ա. XIII-VI դարերով: Ախթալայից, Մուսիերիից, Սևանից, Ենոքավանից գտնված գոտիների վրա աղեղները պատկերված են շատ մանրամասն (255, նկ. 190; 20, նկ. 186; 102, աղ. II): Առանձնանում են աղեղների երկու տիպ: Առաջինը պատկերված է ամենավաղ թվագրվող ժայռապատկերների վրա և դա պարզ՝ սեգմենտաձև աղեղ է (աղ. 41, 7), իսկ ուշ բրոնզեդարյան և վաղ երկաթի հուշարձաններում պատկերված են բարդ-բաղադրյալ աղեղներ, որոնց ծայրերը թեքված են դուրս, երբեմն՝ ոլորված (Մուսիերի, Ենոքավան), իսկ կենտրոնում ունեն կլորավուն, անկյունավոր, անշարժ մաս (աղ. 41, 13, 14): Ըստ չափերի ևս աղեղները բաժանվում են երկու խմբի. փոքր և մեծ՝ մարդահասակ, որոնք հիշեցնում են Քսենոֆոնի նկարագրած կարդուխների աղեղները: Դրանք ունեն երեք կանգուն երկարություն, և նետարձակման ժամանակ լարը ձգում էին՝ ձախ ոտքը դնելով աղեղի ստորին ծայրի վրա (65, V, II, 28): Ըստ երևույթին այս մեծ աղեղները նկատի *ունի Խորենացին՝ անվանելով դրանք «լայնալիճ» (51, I, ԺԱ): Ուրարտական աղեղների մասին ևս, պատկերացում են տալիս բալավաթյան դռների, ուրարտական դամբարաններից գտնված գոտիների վրա պահպանված պատկերները, որտեղ ուրարտացի նետաձիգները ձեռքներին կրում են պարզ սեգմենտաձև աղեղներ: Ուրարտացիք ունեին և երկրորդ՝ բարդ բաղադրյալ աղեղներ (181, աղ. IV, VI): Առաջավոր Ասիայում, Միջագետքում, Իրանում և Եգիպտոսում երկու տիպի աղեղներն էլ շարունակում են իրենց գոյությունը թե՛ քննարկվող ժամանակաշրջանում և թե՛ հետագա դարերում: Թվում է, որ Հայաստանի հուշարձաններում պատկերված աղեղները նման են հատկապես ասորեստանյան և պարսկական աղեղներին, որոնք ներկայացված են Աշուրբանիպալի Նինվեի պալատի ռելիեֆներում (175, աղ. 252), Հասանլուի ոսկյա և արծաթյա թասերի վրա (ըստ որում առկա են թե՛ պարզ-սեգմենտաձև, թե՛ բարդ բաղկացուցիչ, կեռավուն կամ գալարվող ծայրերով (264, էջ 88): Այս նույն աղեղները օգտագործվում էին և աքեմենյան ժամանակաշրջանում: Դրանց պատկերումները տեսնում ենք Պերսեպոլսի և Շոշի ռելիեֆների, Դարեհի գլանաձև կնիքի վրա պատկերված որսի տեսարանում, դարեկների վրա (175, աղ. 288, 316), որոնց Հե-

ռոդոտը (44, VII, 61, 62) և Քսենոփոնը (65, III, 4, 17) անվանում են «մեծ»: Այսպիսով, քննարկված բոլոր զուգահեռները խոսում են հօգուտ նրա, որ ինչպես մյուս երկրներում, այնպես էլ Հայաստանում մ.թ.ա. VI-IV դարերում կարող էին օգտագործվել աղեղների երկու տեսակներն էլ: Եվ այն փաստը, որ հայկական զորքերը աքեմենյանների պատերազմների մշտական մասնակիցներն էին և, ինչպես Քսենոփոնն է հաղորդում, Տիրիբազի բանակից եկող մարդը կրում էր պարսկական աղեղ (65, IV, IV, 16) լրացուցիչ հաստատում են այս ենթադրությունը:

ՆԻԶԱԿՆԵՐ: Մ.թ.ա. VI-IVդդ. հուշարձաններից հայտնաբերված նիզակների սայրերն իրարից տարբերվում են սայրի և կոթառի տարբեր ուրավգծերով ու չափերով, ուստի քննության համար, հաշվի առնելով որոշ հատկանիշներ, նիզակները բաժանում ենք երեք խմբի: Առաջին խմբի նիզակները (երկ. 40,5 – 20,5սմ) աչքի են ընկնում կարճ կոթառով, որի վրա երբեմն երկուական անցքեր են լինում՝ փայտին ամրացնելու համար, խիստ սրածայր երկար շեղբով և լավ արտահայտված, բայց նեղ միջնաջիղով: Շեղբի եզրերի անցումներն ընդգծված են (աղ. 42, 1, 2): Այս նիզակներից գտնվել են Նորաշենից, Բերդից, Զրառատից, Աթարբեկյանից, Աստղի բլուրից, Իջևանից, Որնակից, Ղաչաղանից, Ախլաթյանից, Կուրթանից, Մակարաշենից, Կարճաղբյուրից: Արանց վաղ թվագրվող օրինակները կարելի է գտնել ուրարտական և նույն ժամանակաշրջանի տեղական հուշարձանների՝ Կարմիր բլուրի, Արգիշտիխինիլիի, Աուխանի, Թագավորանիստի, Գոլովինոյի, Երևանի բուսաբանական այգու դամբարանի համալիրներում, որոնք առանց փոփոխության, շարունակում են օգտագործվել մ.թ.ա. VI-IV դարերում:

Երկրորդ խմբի նիզակներն ունեն միջին չափեր (երկ. 20-25սմ), երկարավուն, խողովակաձև կոթառ, տերևաձև կլոր անցումներով շեղբ: Դրանց լավ արտահայտված, հաստավուն միջնաջիղը ավարտվում է շեղբի կեսին կամ մեկ երրորդին (աղ. 42, 5, 6): Այս տիպը ևս մի քանի նմուշներով երևան է գալիս արդեն մ.թ.ա. VII-VI դարերում, որոնք Ա.Եսայանի մոտ առանձնացված են նիզակների երկրորդ տիպի չորրորդ տարբերակի մեջ (105, էջ 287): Սակայն այս նիզակները առավելապես բնորոշ են մ.թ.ա. VI-IV դարերի համար և շարունակվում են հետագայում:

Երրորդ խմբի նիզակներն ունեն համեմատաբար երկար շեղբ, կարճ կոթառ: Շեղբի վրա բացակայում է միջնաջիղը: Բայց շեղբը կենտրոնական մասում հաստացած է և կտրվածքում ձվաձև (աղ. 42, 4, 7): Այս նիզակները ներկայացնում են նոր տեսակ, որը վերը քննարկված երկրորդ ենթախմբի նիզակների հետ դառնում են բնորոշ հելենիստական ժամանակաշրջանի համար: Ինչպես երևում է նկարագրությունից, բաժանումը կատարված է առավելապես ձևաբանորեն, քանի որ բոլոր՝ երեք խմբերն էլ ունեն մեծ կամ փոքր չափերի օրինակներ: Ձևերի այս դասակարգումը ևս բացարձակ չէ, քանի որ յուրաքանչյուր խմբի մեջ կան անցումների, համաչափությունների, ինչ-որ յուրահատկություններ ունեցող նմուշներ: Հատկապես ընդգծման արժանի են այն օրինակները, որոնք կոթառից շեղբին անցման մասում ունեն հաստացում, խնձորակ (Աթարբեկյան և այլն), երբեմն աչքի զարնող շատ լայն շեղբ և այլն (աղ. 42, 2): Անկախ այս առանձնահատկություններից, նիզակների զարգացման մեջ նկատվում է մեկ ընդհանուր օրինաչափություն՝ չափերի փոքրացում և ձևերի, անցումների մեղմացում, կլորացում: Պետք է նշել, որ գրականության մեջ պատմիչների մոտ ևս կա նիզակների տարբերակում (44, 7, 72): Այս նիզակներն իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն հարևան երկրների, նույն ժամանակաշրջանով թվագրվող հուշարձանների՝ Բեշտաշենի, Քսանիի կիրճի հուշարձանների, Մծխեթի, Մինգեչաուրի, Դոլանլարի նյութերի մեջ (160, աղ. XI-XV; 87, էջ 52-53: 146, էջ 56, աղ. 5: 123, աղ. V, 1-3: 164, աղ. VI, 3-4): Նույնատիպ նիզակներ էին կիրառում այդ նույն դարերում նաև Փոքր Ասիայում, Իրանում և այլուր (271, աղ. 76):

ՏԵԳԵՐԸ, որոնցով զինվում էին թեթևազեները, և որոնք կիրառվում էին նետելու միջոցով, ձևով ճշտորեն կրկնում են նիզակների երկրորդ խմբի ուրվագիծը՝ փոքր չափերի մեջ (երկ. 8-14սմ): Արանց մոտ ևս կոթառներն ավելի երկարավուն են, քան շեղբերը, որոնք եռանկյունաձև են, սրածայր կտրուկ եզրերով, լավ արտահայտված միջնաջիղով (աղ. 42, 8): Նորաշենի երկու տեգը մի փոքր շեղվում են ընդհանուր նկարագրից: Դրանք ավելի փոքր չափերի են (երկ. 7,5-8սմ) մեկն ունի թեթև տերևաձև, կտրվածքում ռոմբաձև շեղբ, որը նեղանալով՝ վեր է ածվում խողովակաձև կոթառի (աղ. 42, 10): Երկրորդը կտրած է երկաթե թերթիկից, շեղբը տափակ է՝ նշտարաձև, որի ստորին երկարուկ մասի եզրերը վրա է բերված և ստեղծված լայն ճեղքով կոթառը (աղ. 42, 9): Այս երկու նմուշները առ այժմ եզակի են Հայաստանի նյութերում: Նման առարկաներ կան

Մինգեչաուրի և Դոլանլարի նյութերի մեջ և թվագրվում են մ.թ.ա. VI-IV դարերով (164, աղ. VI, 4): Տեգերի օգտագործման մասին տեղեկություններ է հաղորդում Հերոդոտը. պարզվում է, որ Քսերքսեսի բանակում փոքրասիական համարյա բոլոր ժողովուրդները մյուս զենքերի հետ միասին զինված էին տեգերով (44, VII, 72, 75, 79): Հնագիտական նյութը կարծես հաստատում է այս կարծիքը: Տեգեր հայտնաբերվել են Բողազքյոյից, Միդասի քաղաքից և այլուր (249, աղ. 42, d, 8, 9, 10):

ՀԱՇՈՒՅՆԵՐ: Քննարկվող ժամանակաշրջանի դաշույնները վկայված են թե՛ հնագիտական նյութերով, թե՛ գրավոր աղբյուրներով: Հերոդոտը գրում է, որ Քսերքսեսի բանակում կռվող արմենները, պաֆլագոնացիների, լիդիացիների, մատիենների, կապադովկիացիների, փռյուգիացիների նման, զինված էին նիզակներով, տեգերով, դաշույններով (44, VII, 73): Դաշույններով էին զինված նաև ալարոդներն ու սայսպերները (44, VII, 79): Դաշույնները Հայկական լեռնաշխարհում անցել են զարգացման երկար ուղի, առաջացնելով շատ ձևեր: Մ.թ.ա. VI-IVդդ. հուշարձաններից հայտնաբերվածները կարելի է խմբավորել երկու հիմնական տեսակի մեջ, չնայած յուրաքանչյուր նմուշի անհատական տարբերություններին: *Առաջին տեսակի* դաշույններն ունեն եռանկյունաձև, դաստակի հետ միասնական կռած, կտրվածքում ձվաձիր, երկսայր լայն շեղբ: Բոլորն առանց խտրության ունեն միջնաջիղ: Շեղբի վերին մասում, դաստակի վրա պահպանված են դաստապանները ամրացնող գամերը (երկ. 26-30սմ): Դաշույնների այս տեսակի մի մասն ունի ուղիղ երկար ու տափակ դաստակ, որի վրա ամրացվել են դաստապաններ (աղ. 43, 1, 2), իսկ մյուս մասի մոտ դաստակն ավարտվում է կլորավուն, կիսալուսնաձև գլխիկով (աղ. 43, 3): Այս դաշույնները առաջավորասիական դաշույնների օրգանական շարունակությունն են:

Մի փոքր տարբերվում են Աստղի բլուրի և Ակների մեկական դաշույնները, որոնք ունեն նույնատիպ եռանկյունաձև, սակայն տափակ շեղբ, և նրա շարունակությունը կազմող լեզվակ-դաստակ, որն ագուցվել է դաստակալի մեջ: Աստղի բլուրի դաշույնը շեղբի և լեզվակի միջև ունի քառակուսի (երկ. 9սմ) հաստացում, իսկ լեզվակի վրա կան տասը խոշոր օղակներ, որոնք շարված են իրարից որոշ հեռավորության վրա (աղ. 43, 4): Արանց արանքները հավանաբար լցված են եղել փայտե կամ ոսկրե ներդիրներ (104, էջ 38): Այսպիսի մի դաշույն էլ հայտնի է Մուսիերիից (255, էջ 91, նկ. 34, 35):

Կիսալուսնաձև գլխիկով դաշույններից հետաքրքիր է Աստղի բլուրի մեկ այլ դաշույնը: Այն ունի երկաթե, եռանկյունաձև, կտրվածքում ռոմբաձև շեղբ և բրոնզյա, ձուլածո, կիսալուսնաձև գլխիկով ու սեպաձև փոսիկներով զարդարված դաստակ (աղ. 43, 5): Հայաստանի հուշարձաններից նման դաշույններ հայտնի են չորսը՝ Կույբիշևից, Թումանյանից, Նոյեմբերյանից (11, աղ. XXXVI, 6) և Աստղի բլուրից: Առաջին երեքը պատահական գյուտեր են, միայն վերջին նմուշն է, որ ունի որոշակի թվագրություն: Սակայն մյուս երեքի թվագրումը հնարավոր է I հազարամյակի սահմաններում միայն, քանի որ երկաթե շեղբի և բրոնզե դաստակի միասնությունը բնորոշ է այդ ժամանակաշրջանին և երկաթի հաղթանակի վառ արտահայտություն է: Պետք է նշել, որ երկմետաղների համադրումը նախապատրաստված էր արդեն բրոնզի դարի վերջում զենքերի կամ գործիքների, տվյալ դեպքում դաշույնների մասերը առանձին պատրաստելու և իրար միացնելու տեխնիկայով: Երկու մետաղների համադրությամբ պատրաստված զենքերը հանդես են գալիս արդեն III հազարամյակի երկրորդ կեսից, լայն տարածում են ստանում քննարկվող ժամանակաշրջանում և պահպանվում մինչև մեր թվականության սկզբները (236, էջ 62; 237, էջ 206): Աստղի բլուրի դաշույնը վկայում է, որ Հայաստանը դուրս չէր մնում օրինաչափությունից: Նույնանման բրոնզե-երկաթե դաշույն կա մ.թ.ա. VI-IVդդ. թվագրվող Պերսեպոլսի նյութերի մեջ (271, աղ. 75, 9):

Դաշույնների *երկրորդ խումբն* ունի կեռ, դաստակի հետ միասնական կոփածո, միասայր շեղբ: Ուղիղ դաստակի վրա պահպանվել են դաստապաններն ամրացնող գամերը (աղ. 43, 7): Դրանք շատ նման են կեռ դանակներին և ունեն նույն չափերը (երկ. 13-34սմ) և երբեմն դժվար է իրարից տարբերակել: Ջրառատի դաշույնի դաստակը համեմատաբար նեղավուն է, հավանաբար ագուցվել է դաստապանի մեջ, իսկ Նորաշենի դաշույնը առանձնանում է դաստակի կլորավուն գլխիկով և գլխիկի ու ողջ դաստակի երկայնքով խիտ շարված գամերով, որոնք ծառայել են ոչ միայն դաստապանը ամրացնելուն, այլև դաշույնին տվել են գեղեցիկ տեսք (աղ. 43, 8): Դաշույնների մի մասն էլ, դանակների նման, ունեն օղակավոր դաստակ (աղ. 43, 9): Կեռ դաշույնները տարածված են եղել ոչ միայն արևելյան և հյուսիս-արևելյան Հայաստանի շրջաններում, այլև արևմտյան

Հայաստանի տարածքում: Քսենոփոնը խոսելով խալյուբների զենքերի մասին, հիշատակում է նաև լակեդեմոնական կեռ դանակներին նմանվող դաշույններ (65, IV, VII, 16, ծանոթություն, էջ 263, 35): Երկրորդ տեսակի դաշույնները Հայկական լեռնաշխարհում նոր երևույթ պետք է համարել, որոնք ըստ երևույթին ծագել են ժամանակագրորեն ավելի շուտ հանդես եկած կեռ դանակներից:

Վաղ հայկական դաշույնների համար օգտագործվել է պատյանների երկու տեսակ: Առաջին տեսակը եղել է փայտյա, որոնց մասին պատկերացում ենք կազմում դրանց բրոնզե երեսակալների մեջ պահպանված մնացորդներից (Բերդ): Երեսակալները պատրաստված են թերթիկ բրոնզը ոլորելու տեխնիկայով և զարդարված են դրվագումով արված կետագծերով և այլ մոտիվներով: Երեսակալները լավ են պահպանված (երկ. 23-27, աղ. 43, 10): Այս պատյաններից, ավելի ճիշտ երեսակալներից, հայտնաբերվել են Նոր Բայազետի, Բասարգեչարի, Լալվարի, Ակների դամբարաններից, որոնք վկայում են դրանց կապը նախորդ ժամանակաշրջանի մշակույթի հետ:

Պատյանների *երկրորդ տեսակը* եղել է կաշվից: Մեզ հասել են դրանց բրոնզե վերնակալները՝ մետաղյա ժապավենից պատրաստված ծվածիր օղակները և ծայրապանները՝ գագաթով ցած ուղղված, գնդիկով ավարտվող եռանկյունաձև առարկաները, որոնք երկու կողմից ամփոփել են պատյանի կաշվե մասը (աղ. 43, 11):

ԿԱՑԻՆՆԵՐ: Հայաստանում երկաթյա ռազմական կացիններ, որոնք Անդրկովկասում հանդես են գալիս I հազարամյակում, փոխարինելով ավելի բարդ գծագիր ունեցող, բրոնզե սակրերին և կոբանյան տիպի կացիններին, հայտնաբերվել են ընդամենը 9 հատ: Հինգ օրինակ գտնվել են Մուսիերում, մեկ օրինակ Խրտանոցում, մեկը՝ Կուրթանում և մեկը Բերդաքարում: Ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում դրանք ընդհանուր առմամբ թվագրվում են մ.թ.ա. VII-IV դարերով: Քննարկվող կացիններից մ.թ.ա. VI-IVդդ. են վերաբերում Կուրթանի և Բերդաքարի օրինակները: Կուրթանի կացինը աչքի է ընկնում նեղ երկրաչափական ուրվագծով և մեծ չափերով (երկ. 25 սմ): Կոթառի մասն ունի թեթև ուռուցիկություն և ծվածև անցք, որն ավելի մոտ է բութ՝ մուրճատիպ գլխիկով թևին: Աուր՝ կացին թևը երկարավուն է և թեթև կորացած (աղ. 43, 13):

Մի փոքր այլ կառուցվածք ունի Բերդաքարի կացինը, որի նեղ թևը ավարտվում է կլորավուն սայրով, կոթառը ուղիղ է ու բարձր, կենտրոնական մասում ծվածև անցքով: Այս կացնի բութ՝ մուրճ թևը շատ կարճ է, համարյա բացակայում է (աղ. 43, 6): Կացնի թևի կորությունը, սայրի փոքրությունը թույլ չեն տալիս այն համարել գործիք, քանի որ նրա աշխատանքային օգտակար գործակիցը չնչին է, ինչպես նշում է իրը հայտնաբերող Ա.Եսայանը (109, էջ 188): Ըստ ձևի և զանգվածեղության, այն ավելի շատ զենք է: Բերդաքարի կացինն իր ուղղակի զուգահեռները չունի, սակայն շատ մոտ է այդ նույն դարերով թվագրվող Բեշտաշենի կացինին (136, նկ. 43): Քննարկված կացինները ձևով և չափերով կարող են միանալ Մ.Ն. Պոգրեբովայի դասակարգած կացինների առաջին «բ» խմբին, որի մեջ խմբավորվում են արևելյան Վրաստանի և Հյուսիսային Հայաստանի կացինները: Դրանք հանդես են գալիս մ.թ.ա. VI-V դարերում (182, էջ 184):

Դատելով կացինների ձևից, դրանք զուգակցում են մարտական և աշխատանքային հատկանիշներ: Հավանաբար այսպիսի կացնով էր ջարդում փայտը Քսենոփոնը՝ Հայաստանով անցնելիս, նման «երկսայր տապարով» էր զինված Տիրիբազի զորքից եկած զինվորը (65, IV, 4, 16): Նույնատիպ երկսայր կացիններ են կրում Պերսեպոլսի ռելիեֆների վրա պատկերված զինվորները (270, էջ 43, 44), իսկ Սիդոնում հայտնաբերված «Ալեքսանդրի սարկոֆագը» զարդարող տեսարանում դրանք կիրառված են որսորդության ժամանակ (248, նկ. 447): Քննարկվող կացիններն ունեն կիրառական և աշխարհագրական տարածման լայն շրջանակ: Դրանք տարածվում են Առաջավոր Ասիայից Հնդկաստան, Պարսկաստանից Հյուսիսային Կովկաս և հարավռուսաստանյան տափաստանները: Այս հանգամանքը բարձրացնում է կացինների առաջացման վայրի, հայրենիքի հարցը: Ուսումնասիրողների մի մասը հակված է կացինների հայրենիքը տեսնել Արևելքում, Սիբիրում, որտեղից սկյութների հետ տարածվել են արևմուտք: Այստեղից էլ կացինների «սկյութական» կոչումը: Սակայն պետք է նշել, որ սկյութների մոտ, Միջին Ասիայում, Հնդկաստանում և Պարսկաստանի արևելյան շրջաններում առավելապես տարածված է կացինների մի տարատեսակը՝ կտցավորները, իսկ Առաջավոր Ասիայում, Կովկասում, Արևմտյան Պարսկաստանում՝ կացին-մուրճերը: Եվ իրավացի են Ե.Ի.Կրուպնովը, Վ.Ի.Իլյինսկայան, Ա.Ի.Մելյուկովան և Գ.Ֆ.Գորբեջիշվիլին, որոնք առանձնացնելով այս տարատեսակները, գտնում են, որ կացին մուրճերն ունեն տեղական՝ կովկասյան

ծագում (134, էջ 20: 118, էջ 51; 93, էջ 112): Սակայն անհրաժեշտ է մի փոքրիկ ճշտում, քննարկվող կացիններն ունեն տեղական՝ առաջավորասիական ծագում: Դեռևս մ.թ.ա. XIV-XIIIդդ. կացին-մուրճեր են օգտագործվել Տրոյայում, ըստ որում այդ կացինների կոթառի անցքը տեղադրված է կենտրոնական մասում և չափերն էլ համընկնում են մեր քննարկվող կացինների չափերին (երկ. 23,5 սմ, 145, էջ 123): Երկսայր կացիններ և մուրճ-կացիններ են կրում իրենց ձեռքերում խեթական և ուրարտական շատ աստվածներ, հավանաբար, որպես աստվածային հզորության խորհրդանիշ: Հատկապես ցայտուն է երևում Թել-Ահմարից (Թիլ-Բարսիպից) գտնված հարթաքանդակի վրա պատկերված աստծո ձեռքի կացին-մուրճը: Քանդակը թվագրվում է մ.թ.ա. IX դարով (282, աղ. 86): Դեռևս Մ.Ի.Ռոստովցևն է անդրադարձել այս պատկերներին և մուրճ-կացինների ծագումը կապել խեթական հնությունների հետ (189, էջ 347): Նույն դարերով և մի փոքր ավելի ուշ՝ մ.թ.ա. VIII-VIIդդ. են թվագրվում նաև պարսկական Թալիշի շրջանում գտնված երկաթե կացինները (250, նկ. 243): Կացին-մուրճերով հակառակորդի ամրոցն են գրոհում Աշուրբանիպալի պալատի հարթաքանդակների վրա պատկերված զինվորները (175, աղ. 217): Եվ վերջապես վերը քննարկված մ.թ.ա. VII-VI և VI-IVդդ. կացիններն ապացուցում են դրանց գենետիկական անընդմեջ գոյությունը Առաջավոր Ասիայում և Հայաստանում:

ԳՈՒՐԶԵՐ: Վաղ հայկական ժամանակի գուրզեր չեն հայտնաբերված: Բացառություն է Նորաշենից գտնված արծանիկի ձեռքում պատկերված գուրզը: Այն գնդաձև է, հարթ մակերեսով (աղ. 43, 12): Քանի որ արծանիկը ներկայացնում է արջի դիմակով մերկ տղամարդու, ինչ-որ ծիսական արարողության պահին, գուցե եզրակացնենք, որ գուրզերն օգտագործվում էին միայն ծիսական պաշտամունքային արարողությունների ժամանակ, այսինքն վեր են ածվում իշխանություն, հզորություն խորհրդանշող մականի: Սակայն մյուս կողմից, այս ժամանակի համար, գուրզը որպես զենք հիշատակում է Հերոդոտը: Փայտյա կոթով և երկաթե գլխիկով գուրզերով էին զինված ասորեստանցիները Քսերքսեսի բանակում (44, VII, 63):

Բացի քննարկված զենքերից, ըստ Հերոդոտի և Քսենոփոնի հաղորդումների մ.թ.ա. VI-IVդդ. հայերն օգտագործում էին նաև թրեր (135, VII, 1, 2), որոնց մասին չունենք նյութական տեղեկություններ և հռչակված էին որպես լավ պարսատիկավորներ (65, III, IV, 4):

ԶՐԱՀՆԵՐ: Զրահների նյութական մնացորդները վաղ հայկական հուշարձաններում շատ քիչ են և այս բացը մասամբ լրացնում են կերպարվեստի հուշարձաններում պահպանված նյութերն ու պատմիչների թողած տեղեկությունները: Ըստ այդ տվյալների և նախորդ դարերում Հայաստանում գործածվող զրահների, կարելի է պնդել, որ մ.թ.ա. VI-IV դարերում հայ զինվորները կրել են սաղավարտ, զրահաշապիկ, վահան, ոտքերին հագել են մինչև ծնկամկանը հասնող երկարաճիտ կոշիկ:

Զրահաշապիկների գործածությունը վկայված է տարբեր ձևերի և չափերի զրահաթերթիկներով և ճարմանդներով: Բնորոշ են ծուլման եղանակով պատրաստված կիսակլոր, ուռուցիկ իրանով (տրամ. 0,5-6սմ, Բերդ, Աստղի բլուր, Աթարբեկյան, Զրառատ, Ակներ և այլն), սրագագաթ, կոնաձև, խիստ փռված եզրերով (տրամ. 4-5սմ, Բերդ, Աստղի բլուր), կլոր, տափակ իրանի եզրերը ներս թեքված (Բերդ) ճարմանդները, որոնք ներսից ունեն մեկ կամ երկու պնդօղակ (աղ. 44, 1, 2, 3): Թերթիկ բրոնզից դրվագմամբ են պատրաստված կլոր կամ ձվաձև, կենտրոնում թեթև ուռուցիկ զրահաթերթիկները (տրամ. 3-7սմ Ազատավան, Ջուջևան, Կարճաղբյուր), որոնք շապիկին ամրացվել են կենտրոնական կամ եզրային անցքերով (աղ. 44, 4, 5, 6, 7): Ճարմանդների և զրահաթերթիկների մի մասը զարդարված են փորագիր գծիկներով կամ դրվագված կետերով: Քննարկված տեսակները խիստ բնորոշ են Անդրկովկասի և Հայաստանի համար: Հայտնաբերվել են Գետաբեկից, Դոլանլարից (116, աղ. VIII, 1, 4, 5; 164, էջ 61, նկ. 3_5), Թրիալեթիից (136, էջ 101) և այլն: Այս զուգահեռները ցույց են տալիս, որ վաղ հայկական զրահաթերթիկները համեմատած վաղ թվագրվողների հետ, էական փոփոխություններ չեն կրել: Հայաստանի վաղ թվագրվող հուշարձաններից զրահաթերթիկներ հայտնաբերվել են Լճաշենից, Արթիկից (217, էջ 60), իսկ առավել մոտակա զուգահեռներ են հանդիսանում Գոլովինոյի և Լոռիի մ.թ.ա. VIII-VIդդ. թվագրվող դամբարաններից գտնվածները (165, նկ. 17, 18, 97, աղ. VII): Արթիկի և Գոլովինոյի զրահաթերթիկների և ճարմանդների վրա պահպանվել է կաշվե հիմքի մնացորդներ, որոնցից պարզվում է, որ զրահաշապիկները հյուսվում էին կաշվե փոկերից և ծածկվում վերը քննարկված բրոնզե ճարմանդներով և թերթիկներով: Հյուսկեն զրահների հիմնական հատկությունը՝ դյուրաճկունությունն ու դյուրաթեքությունը, պայմանավորված է հիմքի և նրա վրա կարվող թերթիկների միացման

մեթոդով: Միացումը հավանաբար իրականացվում էր ջիլերով կամ կաշվե փոկերով: Իսկ քննարկվող թերթիկ-ճարմանդների տարբեր չափերը և ձևերը կախված են զրահի վրա դրանց գրաված տեղից, նշանակությունից: Բացի այս զրահաշապիկներից, Քսենոփոնը Հայկական լեռնաշխարհի համար վկայում է նաև վուշից հյուսած պաշտպանական շապիկ, որն ուներ զրահաթերթիկներին փոխարինող հաստ քուղեր (65, IV, VII, 15): Վուշե զրահաշապիկների մասին Քսենոփոնը խոսում է նաև Կյուրոպեդիայում (135, VI, IV, 2), դրանց հիշատակում է և Հերոդոտը (44, II, 132, III, 47): Ըստ երևույթին վուշե և մազե պաշտպանական շապիկները ամենավաղ տեսակներն են, քանի որ դրանց մասին խոսում է դեռևս Հոմերոսը (45, 2, 529, 830):

Եվ, վերջապես, Հերոդոտը նկարագրում է զրահաշապիկի երրորդ՝ մեդապարսկական տեսակը՝ «երկաթե թերթիկավոր, ձկան թեփուկի նմանությամբ» (44, VII, 61), որը ըստ նկարագրության շատ նման է Կարմիր բլուրից հայտնաբերված, թերթիկավոր զրահաշապիկներին (181, էջ 166, նկ. 28): Զրահաշապիկների այս տեսակը կարող էր պահպանվել հայերի մոտ և գուցե հենց այս տեսակով էին զրահապատված Կյուրոսը և նրան շրջապատող զորահրամանատարները, որոնց մեջ և հայոց արքայազն Տիգրանը (135, VII, I, 2): Աքեմենյան ժամանակաշրջանում հայկական և պարսկական զրահների նմանության ապացույց են նաև Պերսեպոլսի պեղումներից հայտնաբերված բրոնզե, երկաթե կիսակլոր, կիսածվածև և ուղղանկյուն զրահաթերթիկները (271, աղ. 77) և «զրահ» տերմինը, որը գալիս է հին իրանական «zar» - ծածկել, փաթաթել բայական հիմքից (66, էջ 57, ծանոթագրություն 1):

ՍԱՂԱՎԱՐՏՆԵՐ: Վաղ հայկական ժամանակաշրջանում օգտագործվող սաղավարտների մի տեսակը տեսնում ենք Այրումի գանձի արձանիկների վրա: Այդ սաղավարտների՝ մինչև ականջները հասնող ստորին եզրերը ուղիղ են, չունեն վերունքային աղեղնաձև կտրվածքներ, իսկ կիսաբոլոր գագաթը ծգված է վեր և ավարտվում է առաջ եկած և ճակատի վրա կախված եղջրատիպ ելուստով: Չևի չորությունը, գագաթի և կատարի միասնական լուծումը հուշում են, որ սաղավարտը մետաղից է (աղ. 44, 8, 9, 11, 13): Այն խիստ տարբերվում է Հայկական լեռնաշխարհում ավելի վաղ օգտագործվող խեթական, ասորեստանյան և ուրարտական կատարավոր, փետրափնջավոր սաղավարտներից: Քննարկվող սաղավարտներից կրում են նաև Պառավաքարից հայտնաբերված զինվորների և մանրակերտ ռազմակառքի կառավարի արձանիկները, որոնք թվագրվում են մ.թ.ա. IX-VIII դարերով (107, նկ. 2_2): Նույն դարերով է թվագրվում նաև Իրանի Խուրվին հնավայրից գտնված նման սաղավարտը կրող արձանիկը (281, աղ. 156, a, b, c): Սակայն ճակատային մասի լուծմամբ մեր սաղավարտները առավել մոտ են Ամոս կղզում հայտնաբերված կաթսայի զարդ հանդիսացող արձանիկի սաղավարտին (աղ. 44, 10): Մ.թ.ա. VIII դարով թվագրվող այդ արձանիկին, վերագրվում է արևելյան, հավանաբար փռյուգիական ծագում (98, նկ. 56): Ըստ այդմ, մ.թ.ա. I հազարամյակից Հայկական լեռնաշխարհում և Իրանում տարածվում է սաղավարտների մի տեսակ, որը Բալկաններին, Փոքր Ասիային հայտնի էր մ.թ.ա. II հազարամյակի վերջից և I հազարամյակի սկզբից (234, Beilage F), որը կրկնում է «փռյուգիական գդակ» անվանումը կրող գլխի հարդարանքի ձևը: Սաղավարտի այս տեսակի հանդես գալը Հայկական լեռնաշխարհում, հավանաբար, կապված է թրակիա-փռյուգիական էթնիկ տարրի տարածման հետ:

Մ.թ.ա. VI-IVդդ. Հայաստանում, ամենայն հավանականությամբ, շարունակվում է Ուրարտուում, Ասորեստանում և ընդհանրապես Առաջավոր Ասիայում ստեղծված և լայնորեն տարածված կոնաձև, սրագագաթ սաղավարտների օգտագործումը (աղ. 44, 12): Դրանք մեծ քանակությամբ հայտնաբերվել են Հայաստանի, Անդրկովկասի և Կովկասի շատ հնավայրերից (181, էջ 167; 101, էջ 99): Կոնաձև սաղավարտների մ.թ.ա. VI-IV դարերում պահպանման օգտին են խոսում Ախալգորիի գանձի արձանիկի կոնաձև գլխարկը (192, աղ. 61), Հունաստանում, Օլիմպիայում պահվող մեդա-պարսկական անվանված սաղավարտը (234, Beilage F):

Ըստ պատմիչների հաղորդումների, սաղավարտները պատրաստվում էին մետաղից, կաշվից՝ հյուսկեն և փայտից: Կյուրոպեդիայում Քսենոփոնը հիշատակում է պղնձյա սաղավարտներ՝ սպիտակ փետրափնջով, որոնք կրում էին Կյուրոսը և մյուս զորահրամանատարները, որոնց թվում և Տիգրանը (135, VII, I, 2): Հերոդոտը արմենների, փռյուգիացիների և պաֆլագոնացիների սաաղվարտներն անվանում է հյուսկեն (44, VII, 72, 73) հավանաբար, ինչպես ասորեստանցիներինը՝ պղնձից հյուսված (44, VII, 63): Իսկ ալարոդները և սասպերները կրում էին կոնաձև, սուր գագաթով փայտյա սաղավարտ (44, VII, 79):

Գլխի հարդարանքի մեկ այլ տեսակն են թերևս ներկայացնում Պերսեպոլսի բարձրաքանդակների վրա պատկերված հայերի կրած գլխարկները: Այն գագաթում եռամաս է, որը կատար է հիշեցնում: Քունքերից ետ են տարված և կապված ականջակալները, որոնք բացված վիճակում կոճկվում էին դնչի տակ: Հետնամասում կախված է վգկալը (270, աղ. 29): Պատկերման ձևը, գծերի անցումը հուշում են, որ գլխարկը պատրաստված է փափուկ նյութից, հավանաբար թաղիքից: Հիշենք, որ պարսիկները Կիաքսարի բանակում կրում էին թաղիքե գլխարկներ, տիարաներ (44, VII, 61):

ՎԱՀԱՆՆԵՐ: Քննարկվող ժամանակաշրջանի վահանների տեսակներում բազմազանություն չի նկատվում: Առաջին տեսակը փոքր չափերի վահաններն են, որոնք իրենց ձեռքում բռնած ունեն Այրումի և Նորաշենի վերը քննարկված արձանիկները (աղ. 43, 12, աղ. 44, 8, 9) և մ.թ.ա. V-IV դարերով թվագրվող հունա-պարսկական կնիքների վրա պատկերված մարտիկները: Այդ կլոր վահաններն ունեն ոչ մեծ եզրեր և թեթևակի ուռուցիկ կենտրոնական մաս: Դրանց զուգահեռներ առատորեն կարելի է գտնել թե՛ վաղ, թե՛ նույն ժամանակաշրջանով թվագրվող նյութերի մեջ: Կլոր վահաններ են կրում ուրարտացիք, սկսած մ.թ.ա. IX դարից (Արամուի զորքերը բալավաթյան դռների պատկերներում) (181, էջ 161), տեղաբնիկները՝ պատկերված Խաչբուլաղից և Աստղի բլուրից հայտնաբերված գոտիների վրա (17, էջ 54, նկ. 27; 102, նկ. 157): Այս վահանները թեթև են և կրելու համար ներսից ունեն ուղղահայաց ամրացված օղակ-բռնակներ (աղ. 45, 1): Կլոր տեսակի վահանները շարունակել են օգտագործվել և հելենիստական ժամանակաշրջանում, ինչպես պատկերված են այդ ժամանակաշրջանի ապակե կնիքների վրա (34, էջ 93, նկ. 1):

Վահանների երկրորդ տեսակը ներկայացված է մեկ օրինակով, կրկին Այրումի նյութերի մեջ: Թեև այս գյուտը պատահական է, սակայն ուղեկցող նյութերով Ս.Ա.Եսայանը այն թվագրում է մ.թ.ա. VI-IV դարերով (107, նկ. 1): Այս տիպը ևս կրկնում է նախորդ դարերում օգտագործվող կիսագլանաձև, վերին եզրը աղեղնաձև, իսկ ստորինը՝ ուղիղ կտրած վահանների ձևը (աղ. 45, 2): Այս վահաններից կրում են ուրարտացիները և Պառավաքարից հայտնաբերված մ.թ.ա. IX-VIII դարերով թվագրվող արձանիկները (107, նկ. 1): Պատմիչների հաղորդումներից և ուրարտական հուշարձաններից հասած նյութական կցկտուր մնացորդներից պարզվում է, որ վահանների պատրաստման համար օգտագործվում էր փայտ, կաշի և մետաղ: Փոքրերը պատրաստվում էին ամբողջական փայտից և պատվում հում կաշվով (44, VII, 76, 79), իսկ մեծերը հյուսվում էին փայտյա շիվերից (հիարկե ճկուն՝ ուռենու և այլ ծառատեսակներից) և կրկին պատվում կաշվով: Թերևս այսպիսի վահանի են պատկանում Արգիշտիխինիլիի թիվ 5 բնակարանի պեղումներով երևան եկած մնացորդները (156, էջ 165): Կլոր և ուղղանկյուն հյուսածո վահաններ են կրում Սարգոնի պալատի հարթաքանդակներում պատկերված ասորեստանցիները և մանեացիները (181, աղ. VI): Հյուսածո են նաև Պերսեպոլսի հարթաքանդակներում պատկերված զինվորների կրած վահանները: Քսենոֆոնը և Հերոդոտը ևս բազմաթիվ անգամներ հիշատակում են տարբեր ժողովուրդների կողմից օգտագործվող կլոր, քառակուսի և ձվաձև հյուսկեն և կաշեծածկ վահանների մասին (65, IV, VI, 26. VI, III, 3: 44, VII, 61):

ՍՈՆԱՊԱՆՆԵՐ: Հայաստանի մ.թ.ա. VI-IVդդ. հնագիտական նյութերի մեջ մետաղյա սոնապաններ, ինչպիսիք եղել են հունական աշխարհում և հիշատակվում են Հոմերոսի ժամանակներից սկսած, չեն հայտնաբերված: Հերոդոտը Քսերքսեսի բանակի մեջ մտնող ժողովուրդներից և ոչ մեկի մոտ չի հիշատակում սոնապաններ: Անդրկովկասում և այլուր, հնագիտական նյութերում երևան եկողները վերաբերում են միայն հելենիստական ժամանակաշրջանին (147, էջ 65, նկ. 173, 174: 92, էջ 11): Դրանց տարածումը վերագրվում է Մակեդոնացու արշավանքներին: Սակայն Հերոդոտը մի քանի ժողովուրդների հետ մեկտեղ հայերի համար նշում է, որ նրանք կրում էին տեղական, մինչև ծկնամկանը հասնող երկարաճիտ կոշիկներ (44, VII, 72), իսկ Քսենոֆոնը դրանք ուղղակի անվանում է սոնապաններ (65, V, II, 22): Պատահական չէ, որ պատմիչները դրանք համարում են տեղական: Այդպիսի երկարաճիտ կոշիկներ տեսնում ենք նաև ուրարտացիների հագին: Այդ կոշիկները կարվում էին ամբողջությամբ կաշվից և լավ պաշտպանում էին ոտքը մարտերում: Հավանական է թվում, որ հենց այդպիսի կոշիկներ են պատկերված Պերսեպոլսի հարթաքանդակներում հայերի և կապադովկիացիների ձեռքերին, որոնք որպես հարկ տարվում էին արքայից արքային (270, աղ. 29, 35):

ՁԻԱՍԱՐՔ: Եթե ուրարտական ժամանակաշրջանի ձիասարքերի և ձիազրահների վերաբերյալ թե՛ նյութական, թե՛ պատկերագրական փաստերը առատ են, ապա նույնը չի կա-

ռելի ասել մ.թ.ա. VI-IVդդ. ձիասարքի մասին: Պահպանված նյութերը վերաբերում են սանձերի, փոկերն ամրացնող օղակների և թամբի տեսակներին: Հայտնի է սանձերի չորս նմուշ, որոնք վերաբերում են երեք տեսակի: Առաջին տեսակը ներկայացնում են Լենինականից (Ալեքսանդրապոլից) դեռևս XIXդ. հայտնաբերված և էրմիտաժում, Մուրյեի հավաքածուի մեջ պահվող (էրմ. K-304), Կուրթանի մ.թ.ա. VI-IVդդ. դամբարանից գտնված, Արին բերդի հեծյալի և ձիու առաջնամասով եղջերափողերի վրա պատկերված սանձերը: Դրանք բրոնզից պատրաստված ուղիղ կամ կեռավուն երախճաններով սանձեր են (117, էջ 92, 93): Յուրաքանչյուրը ձուլված է համապատասխան օղակավոր ծայրերով, փշիկներով պատված երախակալ մասով և իրար միացած, հորիզոնական ագուցված, լրացուցիչ օղակով: Այտափոկերը և երասանը ամրացնելու համար ունեն կենտրոնական, մեծ օղակ և երկու կողային անցքեր: Մուրյեի հավաքածուի օրինակի վրա երախճանի ծայրերը ընդգծված են ձողի թեթև նեղացումով և լայնացումով (աղ. 45, 3), իսկ Կուրթանի օրինակը, որը ամբողջական չէ, այլ միայն երախճանի մի մասը, ավարտվում է մարդու գլխի պատկերով (աղ. 45, 4): Այս երախճանները պատկանում են Անդրկովկասի և Առաջավոր Ասիայի սանձերի այն տեսակին, որոնց ծայրերը երբեմն ավարտվում են կլորավուն գնդիկներով կամ հաստացումներով, երբեմն էլ կենդանիների սմբակների կամ գլխիկների պատկերով: Կուրթանի երախճանի ինքնատիպությունը նրանում է, որ ավարտվում է մարդկային գլխի պատկերով: Սանձերի այս տեսակն առաջացել է մ.թ.ա. VIIդ. սկզբներին, ինչպես երևում է Կարմիր բլուրից հայտնաբերված Մեհնուա արքայի անունը կրող նմուշից (181, էջ 155, նկ. 23) և լայն տարածում գտել Անդրկովկասում, Առաջավոր Ասիայում, Եգիպտոսում, Աթենքում և այլուր (136, էջ 61): Այս սանձերն օգտագործվել են նաև հետագա՝ մ.թ.ա. VI-IV դարերում, ինչպես ցույց են տալիս մեր քննարկած օրինակները, Պերսեպոլսից հայտնաբերված սանձը և դրանց պատկերումները ձիակերպ խոյակների վրա: Ամենայն հավանականությամբ դրանք պահպանվել են նաև հելենիստական ժամանակաշրջանում, քանի որ նման սանձեր են պատկերված Շիրակավանից հայտնաբերված ձիակերպ անոթին (198, էջ 506):

Սանձերի երկրորդ տեսակի մասին պատկերացում է տալիս Ստեփանավանի շրջանի Ագարակ գյուղում, քանդված դամբարանից գտնված երկաթե սանձը: Նրա ուղիղ, քառակող ձողից պատրաստված լկամներն ունեն մեկական, կենտրոնական մեծ օղակ և երկուական եզրային փոքր օղակներ՝ այտափոկերը ամրացնելու համար: Երախակալ մասը կազմված է երկու իրար ագուցված, երկօղակավոր ճյուղերից, որոնց վրա, իրենց հերթին շարված են վեց ատամնավոր սկավառակ: Երախակալին ագուցված մեկական ինքնուրույն օղակներից կապվել են երասանները (աղ. 45, 5): Ագարակի այս երախճանը, իր նույնանման աղերսներն ունի Ախալգորիի (192, էջ 53) և Ալգետիի համալիրներում (136, աղ. XII, XII bis, էջ 34-41): Ինչպես հայտնի է, այս երկու համալիրներն էլ մանրամասն քննարկված են գրականության մեջ և թվագրվում են մ.թ.ա. V-IV դարերով: Այդ նույն դարերով պետք է թվագրել նաև Ագարակի սանձը: Ժամանակագրորեն այն նոր տեսակ է ներկայացնում, որն առայժմ կարելի է վերագրել աշխարհագրական որոշ տարածքի միայն:

Երախճանների երրորդ տեսակը Արին բերդից հայտնաբերված նմուշն է: Այն ամբողջական չէ և կազմված է երախակալ մասի երկաթե օղակներից և երասաններ պահող շղթայի մասից: Չկան լկամները (աղ. 45, 6): Սակայն Թրակիայի Պանագյուրիշտե համալիրի նյութերի հետ հայտնաբերված երկու ամբողջական նույնանման երախճանները թույլ են տալիս պարզելու սանձի տիպը (243, էջ 47-48, նկ. 44): Այս սանձերն ունեն ուղիղ կամ S-ձև լկամներ, որոնց միջև ձգվում է 6-8 օղակներից կազմված երախակալ մասը, ագուցված լկամների կենտրոնական անցքին, որտեղից միացված են նաև երասանները պահող երկաթե շղթայի մասերը (աղ. 45, 7): Արին բերդի սանձը հայտնաբերման շերտագրությամբ և վերը բերված զուգահեռներով թվագրվում է մ.թ.ա. V-IVդդ., թերևս ներկայացնելով վերը քննարկված Ագարակի երախճանի ավելի պարզեցված տեսակը: Այսպիսով մ.թ.ա. VI-IVդդ. Հայաստանում օգտագործվում էին դեռևս մ.թ.ա. VII-VIդդ. լայն տարածում գտած և մ.թ.ա. V-IVդդ. նոր ստեղծված, կարծես կախված լկամներով սանձերի անդրկովկասյան տարբերակի (154, էջ 45: 183, էջ 30) հետագա զարգացում հանդիսացող երախճանների տեսակները:

Ձիասարքի փոկերն ամրացնող *ճարմանդաձև օղակները,* ձուլման եղանակով պատրաստված զանգվածեղ անվակներ են, որոնց մի ծայրում փոկերը ամրացնելու համար ունեն թռչնակերպ անշարժ ելուստ (աղ. 45, 9, 10): Այս ճարմանդանման առարկաները տիպաբանական մանրամասն քննարկման են ենթարկել Ս.Եսայանը և Մ.Պոգրեբովան, բաժանելով չորս

խմբի և որոշելով դրանց կիրառությունը: Մ.թ.ա. VI-IV դդ. այս ճարմանդներից հայտնաբերվել են Բերդից չորս, Կուրթանից մեկ և Բերդատեղից՝ երեք օրինակ (չափերը՝ տրամ. 3,5-5,0 սմ): Համարյա բոլոր օղակների եզրերը զարդարված են նուրբ փորագրմամբ, ակոսավոր նախշերով: Այս օղակ-ճարմանդներից գտնվել են Լալվարի, Կարմիր բերդի նաև Իրանի տերիտորիայի վաղ հուշարձաններից և թույլ են տվել ուսումնասիրողներին իրավացիորեն տեսնելու հայկական և իրանական ճարմանդների տիպաբանական և ոճական կապը (112, էջ 75-76): Այս առարկաները հայտնաբերվում են ժամանակագրական և աշխարհագրական լայն սահմաններում և դրանց ծագումը կապել որևէ էթնիկ խմբի, հատկապես սկյութների հետ, հնարավոր չէ: Հավանական է դրանց տեղական տարբերակների զուգամիտության առաջացման վարկածը տարբեր վայրերում՝ օրինակ՝ Հայաստանում, Միջագետքում, Իրանում և այլուր, ապա դրանց հետագա տարածումը սկյութական և սարմաթական հուշարձաններում, որտեղ դրանք երևան են գալիս մ.թ.ա. III-I դարերում:

Եթե ձիասարքի տեսակները հնագույն ժամանակներից մանրամասն մշակվել են Առաջավոր Ասիայի ժողովուրդների կողմից, ապա նույնը չի կարելի ասել թամբի մասին: Օրինակ, ասորեստանյան թամբը գորգ է, շատ լայն գորգատիպ կրծքակալով, որը կարծես մի ամբողջություն է կազմում (283, էջ 162, նկ. 38): Մեդական ու պարսկական թամբերը նույնպես գորգեր են, ինչպես երևում է պատկերագրական նյութերից և պատմիչների հաղորդումներից: Օրինակ, Ամուդարիայի գանձի թիվ 24 և 36 սկավառակների վրա պատկերված հեծյալները նստած են նման գորգատիպ թամբերի վրա, որոնք ամրացված են փոկերով (114, էջ 48, նկ. 36): Քսենոփոնը պարսիկների մասին ասում է, որ նրանց ձիերի վրա ավելի շատ գորգ կա, քան անկողնու վրա (65, VIII, VIII, 19):

Հայաստանի նյութական մշակույթի մեջ ևս - թամբի հետքեր չեն հայտնաբերված: Նույնիսկ ուրարտական հեծյալների պատկերներում չենք տեսնում, թեև անհնար է, որ գոնե գորգատիպ ծածկոցը՝ սթարը (քնթուշ) չլիներ: Սթարի առաջին պատկերը գտնում ենք մ.թ.ա. VI-Vդդ. թվագրվող Արին բերդի հեծյալի առաջամասով, եղջրանոթի վրա: Այն ուղղանկյուն գորգ է, ատամնավոր և աղեղնաձև եզրածայրերով, զարդարված այծերի և ցուլի պատկերներով (աղ. 45, 8): Այս սթարը կրկնում է վերը նշված մեդաաքեմենյան, ինչպես նաև Շոշի, Պերսեպոլսի, Մակուի ձիակերպ եղջրագավաթների վրա պատկերված սթարները (276, աղ. LIII, 1, 2, 3) տարբերակվելով միայն դրանց վրա պատկերված կենդանիներով: Եվ դատելով Պազիրիկյան 5-րդ դամբարանից հայտնաբերված գորգի տեսակից, այս սթարները լայն տարածում ունեին Աքեմենյան մշակույթի ոլորտում ընդգրկված բոլոր երկրներում, թեև պետք է նշել, որ Ալթայի բնակչությանը ծանոթ էր արդեն վերջնական ձևավորված թամբը: Այդպիսիք գտնվել են Բաշադարյան, Տուէկտինյան դամբարաններում, որոնք թվագրվում են մ.թ.ա. VIդ. երկրորդ կեսով (190, էջ 70, 72, աղ. $L_{4,5}$, էջ 128, նկ. 79, 80):

Հնագիտական նյութերում լավ են ներկայացված ուրարտական ժամանակաշրջանի ձիասարքերի հարուստ հարդարանքները՝ բաղկացած ճակատակալներից, այտաճարմանդներից, զանգակներից, որոնց մի մասը զարդարուն են և կրում են արձանագրություններ: Մ.թ.ա. VI-IVդդ. վերաբերող նման նյութերը շատ քիչ են: Միայն՝ քննարկված ճարմանդների. զանգակների մի մասը, ամենայն հավանականությամբ, օգտագործվել է նաև ձիասարքի մեջ: Սակայն ձիասարքի և ձիազրահի նկարագրություն ենք տեսնում Քսենոփոնի «Կյուրոպեդիայում»: Այս նկարագրության համաձայն, ձիերը պաշտպանված են ճակատակալներով, կրծքապանակով, լանջապանակով և գավակոսկրը ծածկող զրահով (135, VIII, I, 2): Մ.թ.ա. V դարի վերջում, Կունաքսեի ճակատամարտում, Կյուրոս կրտսերի բանակի ձիերը պաշտպանված էին ճակատակալներով ու լանջապանակներով (65 I, 3, 7): Վերջապես Աքեմենյան ժամանկաշրջանի համար զրահներ է հիշատակում նաև Քվինտուս Կուրցիուսը, կապված Իսոսի և Գավգամելայի ճակատամարտերի հետ (130, III, 11, 1; IV, 13, 1): Եվ հայկական հեծելազորը, որը մասնակից էր աքեմենյան զորքերի համարյա բոլոր ճակատամարտերին, չէր կարող չունենալ ձիասարքեր և ձիազրահներ: Այն պետք է ժառանգած լիներ ուրարտական ժամանակաշրջանից և կրեր այն փոփոխությունները, որոնք կատարվել էին աքեմենյան դարաշրջանում:

Այսպիսով, զենքերի քննությունը, մեր տրամադրության տակ եղած գրավոր, պատկերագրական և համեմատական նյութերի հնարավորին չափ օգտագործումը թույլ են տալիս խոսելու այդ զենքերի բազմազանության մասին, նույնիսկ միևնույն տեսակի խմբի ներսում: Բազմազանություն, որը պայմանավորված է նյութով, պատրաստման տեխնիկայով, հին

ձևերի ժառանգմամբ, նորերի առաջացմամբ և ներմուծմամբ: Նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մ.թ.ա. VI-IVդդ. զենքի գերակշռող մասը պատրաստվում է երկաթից, իսկ բրոնզից միայն զրահներ, պատյաններ, հարդարման հետ կապված առարկաներ:

Շարունակելով ուշ բրոնզի և վաղ երկաթի մետաղամշակման ավանդական հմտությունները, բրոնզե նետասլաքների («սկյութական»), սանձերի մի տեսակի, զրահների, հարդարման առարկաների պատրաստումը կատարվում էր ձուլման տեխնիկայով՝ մեկ և երկփեղկ, սովորական և մոմե կաղապարների մեջ: Մյուս կողմից զենքերի պատրաստման գործում գերակշռող մասը պատկանում էր դրանց պատրաստման կռածո-դարբնոցային մեթոդին: Երկաթե զենքերի առատությունը, բազմազանությունը, մասնագիտացված այն խմբերը, որոնք ձևաբանորեն կապվում են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների զենքերի տեղական հնագույն ձևերի հետ, թույլ են տալիս պնդելու դրանց հիմնական մասի տեղական, ըստ որում մասսայական արտադրության մասին, չբացառելով նաև որոշ զենքերի ձևերի և նույնիսկ առանձին պատրաստի առարկաների ներմուծումը դրսից:

Պետք է նշել, որ զենքեր բոլոր հուշարձաններից հավասարաչափ չեն հայտնաբերված՝ կապված հատկապես բնակավայրերի բնույթի հետ: Սակայն այդ զենքերը բոլոր շրջաններում նույնական են, իսկ տարբերությունները՝ կրում են երկրորդական բնույթ:

Քննարկվող ժամանակաշրջանի զենքերի առատությունը և բազմազանությունը բացահայտում են նաև մասնագիտացված արհեստավոր երկաթագործի՝ դարբնի և զինագործի կարևոր դերը տնտեսության մեջ: Այս միտքը հաստատվում է նաև երկաթե առարկաների մետաղագրական ուսումնասիրության արդյունքներով (12, էջ 162):

Զենքերի և ընդհանրապես մետաղե առարկաների քննարկված ձևերի միօրինակությունը, լայն տարածումը բացահայտում են, որ մասնագետ-արհեստավորներն ապահովում էին ոչ միայն իրենց ամրոցի, բնակավայրի համայնքի անդամների, այլև հարևան շրջանների պահանջները, փոխանակային և միջցեղային կապերի ձևով:

Զենքերի քննարկումը պարզում է նաև Հայաստանի մ.թ.ա. VI-IVդդ. զենքերի և զրահների սերտ կապերը և նմանությունները Անդրկովկասի, Առաջավոր Ասիայի մյուս երկրների, Իրանի, Հյուսիսային Կովկասի և նույնիսկ Թրակիայի հետ: Կապեր, որոնք երևում են ոչ միայն կոնկրետ ձևերի նմանությամբ, այլև վկայվում են գրավոր աղբյուրներով: